ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «----------» 2017թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.648-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Լեոյի փողոցի հ.1 շենքի հ.106՝ 114.5 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.12082016-01-0121 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ժիրայր Դադասյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն համարվող Լեոյի փողոցի հ.1 շենքի հ.106՝ 114.5քմ մակերեսով բնակարանն անհատույց սեփականության իրավունքով տրամադրել Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ՝ Ժիրայր Դադասյանին:

Ժիրայր Դադասյանը ծնվել է 1964 թվականի մարտի 27-ին, ԼՂՀ Մարտունու շրջանի Սոս գյուղում և 1966 թվականին տեղափոխվել Երևան: Դեռևս դպրոցական տարիներից մասնակցել է պետական ռադիոյի մանկական հաղորդումներին: Աշխատել է Երիտասարդական պալատի «Ինտերակումբում»՝ որպես մնջախաղաց և երեկոների կազմակերպիչ, այնուհետև՝ պետական ռադիոյում՝ որպես ռեժիսոր և հաղորդավար: 1998 թվականից Երևանի Մնջախաղի պետական թատրոնի գեղարվեստական ղեկավարն ու տնօրենն է: Բեմադրել է «Թռիչք», «Խաղ», Պրևերի «Ինչպես նկարել թռչուն», Բոդլերի «Չարի ծաղիկներ» ներկայացումները: 2000 թվականին «Չարի ծաղիկներ» ներկայացման համար արժանացել է ՀԹԳՄ «Արտավազդ» մրցանակի, իսկ «Շողակաթ» ստուդիայում նկարահանած «Մնջախաղային տեսահոլովակներ» շարքի համար Յալթայի միջազգային հեռուստակինոֆորումում ստացել է առաջին մրցանակ: 2005 թվականին նշանակվել է Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի անդամ, 2007 թվականից՝ նույն հանձնաժողովի փոխնախագահ: Կազմակերպել և անցկացրել է Շուշիի վերականգնմանն ուղղված Շուշի-Բեթխեհեմ-Մոսկվա-Երևան հեռուստակամուրջը և Մնջախաղի միջազգային փառատոնը: 2009 թվականին նկարահանել է «Never again» ֆիլմը՝ նվիրված Հայոց Եղեռնի 95-րդ տարեդարձին: Վերջինս եղել է նաև Լոս-Անջելեսի Գիբսոն թատրոնի Հայոց Ցեղասպանության 96-րդ տարեդարձին նվիրված համերգի բեմադրիչը և 2009 թվականին արժանացել է Հայաստանի արվեստի վաստակավոր գործչի կոչման:

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տվյալների համաձայն՝ Ժիրայր Դադասյանի անվամբ Երևան քաղաքի Մայակ թաղամասի հ.77/17 բնակելի տան նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականություն: Նշված անշարժ գույքը վերջինս ձեռք է բերել 2013 թվականին առուվաճառքի և հիփոթեքի պայմանագրով՝ մինչև 2026 թվականը գույքի գումարը վճարելու պայմանով, սակայն ներկայումս հնարավորություն չունենալով վճարելու բանկի հետ կնքված պայմանագրով նախատեսված գումարը՝ գույքը ներկայացվել է վաճառքի: Նշված բնակելի տանը առկա չեն բնակության համար անհրաժեշտ մինիմալ պայմաններ և ներկայումս փաստացի բնակության համար պիտանի չէ:

Վաստակաշատ բեմադրող ռեժիսորը մշտապես բնակվելով Երևանում, ցավոք, ունի բնակարանային պայմանների խիստ կարիքավորություն: Հաշվի առնելով նրա մասնագիտական կարողություններն ու մարդկային որակները, ինչպես նաև բնակարանային պայմանների ապահովման անհրաժեշտությունը, ստեղծագործելու համար նպաստավոր պայմաններ ապահովելու նպատակով մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ